1883 ԵՐԵՄՆԱՄԵԱԿ 1912

№ 8—9 XXX ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ XXX 1912

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ալէքսանդր I կայսր.
Ալէքսանդր I կայսրի հանդիպումը Նապոլէոնի հետ Տիլզիտում.
Նապոլէոն Բօնապարտ.
Ֆրանս-ռուսական ահեղ պատերազմը.
Նապոլէոն, հրամանատար ֆրանս. բանակի.
Ֆելդմարշալ իշ. Կուտուզով, հրամանատար ռուս բանակի.
Կրէմլի պալատն ու տաճարները.
Սպանուածի դիակին ողբ.
Լրտեսին արժանի դատաստան.
Հռոմի թագաւորի պատկերը Նապոլէոնի բանակում Բօրօդինի ճակատամարտին.
Նապոլէոնը դիտում է Մոսկւայի հրդեհը.
Նապոլէոնի զայրոյթը՝ Չէնքը ձեռքիդ?
Պետրովսկի պալատը Մոսկւայի շրջակայքում.
Նապոլէոնը և պրէնս Միւրատի երեխաները.
Կոթող 1812 թ. Բօրօդինի ճակատամարտում.

ՆԻՒԹ

Երկու բարեկամներ . . . . . Զարուհի.
Ագռաւ և հաւ . . . . . Կրիլով.
Մայլեր . . . . . Թարգմ. արքեպիս. Այվազովսկու.
Կատուաճուկ և կատու . . . . . Պատմ. անցք Ֆուրմանից. թարգ. Ք. Թումեան
Ատաղձագործը և ասեղնագործ աղջիկը . . . . . Պատմ. անցք Ֆուրմանից. թարգ. Ք. Թումեան
I Ժոզէֆինա Բօդարէ . . . . . Պատմ. անցք Ֆուրմանից. թարգ. Ք. Թումեան
II Նապոլէոն Բօնապարտ . . . . . Պատմ. անցք Ֆուրմանից. թարգ. Ք. Թումեան
Հայրենակցի պատերազմի ժամանակագրութիւնը.

Աղբիւրի գլխաւոր բաժանորդները հրաւիրում են իրանց գաւառներում մէջ տարածել Աղբիւրը, բաժանորդ գրել տալով նրանց. Նոր բաժանորդները կստանան Աղբիւրը 1 №-ից.

Աղբիւրի հետևեալ №-ը նւիրւում է ՄԵԾ ՅՕԱՆՆԷՍԵԱՆԻՆ Հայ տառերի 1500 եւ Հայ տպագրութեան 400 ամեակներին.

ԱՂԲԻՒՐ

Երեսուներորդ տարի 1912 № 8—9 Օգոստոս—Սեպտեմբեր

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

1812 **ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՓԱՌԱՒՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ** 1912

ԱԼԲՔՄԱՆԴՐ I

Օրինաբանեալ *Թագաւոր Կայսր*

Ալէքսանդր I Կայսեր հանդիպումը Նապալէօն Բօնապարտի հետ Տիլզիտում

—

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

(1812)

— Լիդչկա, սուս կաց թէ չէ Բօնաբարտին կըկանչեմ։

— Վա՛յ, եկաւ, վախում եմ։ Իսկոյն լռում էր չարաճճի, կապոյտ աչքերով ու գանգուրներով վեցամեայ Լիդեան։

Շատ ժամանակ չէր անցել, որ այդ Բօնաբարտը Լիդօչկենց լաւ բարեկամն էր, բայց այսօր նրա անունն իսկ սարսափ էր բերում ամենքին։

Բօնաբարտը նա է, որի կենսագրութիւնը այսօր առանձին գրքով՝ կամքի ոյժը վերնագրով ձեզ նւէր է տալիս Աղբիւրը։ Կարդացէք նախ այդ ազնիւ, խելօք, իմաստուն ու քաջի մանկական կեանքը և ապա լսեցէք ինձ։

ՆԱՊԱԼԷՕՆ ԲՕՆԱՊԱՐՏ

Նապալէօն I Բօնապարտը մեծանալով – մեծանալով, Ֆրանսիայի կայսը իրան հըռչակեց և մտքումը դրաւ ամբողջ Եւրոպային տիրապետել։ Եւ յիրաւի, շնորհիւ իր խելքի, զինուորական տաղանդի և գիտութեան, իր հզօր կամքով ու բազուկով, խոնարհեցրեց իրան Հռոմը, Եգիպտոսը, Աւստրիան, Գերմանիան, Իտալիան, Բէլճիան, Լեհաստանը և այլն, և այլն։ Մեր Ալէքսանդր I կայսրի հետ էլ սկզբում պահպանեց բարեկամական յարաբերութիւններ և միմեանց սրանք եղբայրներ էին կանչում։

Նապալէօնը աշխատում էր համոզել օրհնաբանեալ Ալէքսանդր I կայսեր, որ սա իր ժողովրդի մէջ տարածէ լուսաւորութիւն, ազնուականներին տարուկ՝ ճորտերին տայ ազատութիւն և երկուսով միասին ամբողջ աշխարհին տիրանալուց յետոյ, մարդկանց տան հաւասարութիւն, ըստ-կութեան շղթաները փշրեն։

Սակայն ճորտերին ազատութիւն տալու հարցը անհաճոյ էր ազնուական կալուածատէրերին և սրանք անշուշտ հզօր խոչընդոտն եղան օրհնաբանեալ Ալէքսանդր I կայսեր, շարունակելու իր բարեկամութիւնը հզօր Նապալէօնի հետ։ Հետևանքը եղաւ 1812 թուին, ուղիղ սրանից հարիւր տարի առաջ, այն մեծ պատերազմը, որ ռուները անուանում են Հայրենական պատերազմ։ Ինչպէս Նապալէօնի վեց հարիւր հազար զինուորների դիմաց երկուհարիւր հազար հայրենասէր ռուս զինուորներ դէմ ելան։ Մեծ էր պատերազմը, բայց աւելի մեծ այն յաղթանակը, որ տարաւ հայրենասէր ռուս քաջ զինուորը։ Նապալէօնը մաաւ Ռուսիայի սիրտ

Յրանս-ռուսական ահեղ պատերազմը

Մոսկուան։ Հսկայ կրէմլի վրայ մի քանի թնդանօթները բացին լայն դուռ Նապալէօնի համար, որպէսզի կարծէք, այնտեղից աւելի լաւ դիտէ, թէ հայրենասէրները ինչպէս են իրանք իրանց ձեռքով ողջակէզ բերում Մոսկուան և հայրենիքն ազատում։ Քաջարի կուտուզով, փորձած զօրավար, իր նշանաւոր յետաքշաւներով Բշնամու բանակը թակարդի մէջ դրեց, ցրտահար, սովամահ արաւ նրանց և վախցրեց հայրենիքից։

ՆԱՊԱԼԷՕՆ ԲՕՆԱՊԱՐՏ
Ընդհան. հրամանատար ֆրանս. բանակի

Այսօր ահա օգոստոսի 26-ին համայն Ռուսիան տօ-

Ֆելդմարշալ իշխան Մ. Ի. Կուտուզով
Ընդհանուր հրամանատար ռուսական բանակի

նում է իր պանծալի յաղթանակի հարիւրամեայ յոբելեանը։ Բոլոր դպրոցականները, մանուկներն ու պատանիները մեծերի հետ միասեղ հրճւում և փառք են տալիս Աստուծուն, որ թէև թիւրիմացութեան պատճառով սրանից հարիւր տարի առաջ երկու եղբայրակից հզօր կայսրներ միմեանց դէմ կռւեցին, մի քանի հարիւր հազար անմեղ մարդկանց գոհ բերելով, սակայն յետագայում, ազատարար Ալէքսանդր II կայսեր ձեռքով ճորտերը ազատած, Ալէքսանդր III

Ռուսիայի սիրտ Մոսկուա. Կրէմլի պալատներն ու տաճարները

Կայսեր օրով մեծ Ֆրանսիայի հետ մեր բարեկամութիւնը վերանորոգւած և այժմեան մեր Թագաւոր կայսեր Նիկոլայ II-ի օրով այդ բարեկամութիւնն այն աստիճան է այսօր ամուր, որ կարծէք, այլևս երբէք ոչոք չըպիտի կարողանայ խզել այդ շաղկապը, որ պէտք ծառայէ խաղաղութեան, մարդկային անդորրութեան:

Ջարուհի

Լրտեսին արժանի պատասխան.

Կրիլովի առակները, 1812 թ. դէպքերի առիթով գրած։
Թարգմ. մեր գիտնական արքեպիսկոպոս Այտազովսկու

Հռոմի Թագաւորի պատկերը Նապալէօնի
բանակում, Բօրօդինի ճակատամարտին
Պարիզի Մալօնում։

ԱԳՌԱՒ ԵՒ ՀԱՒ

Երբոր իշխանըն Սմոլենսքի Քութուզով,
Յանդգնութեան դէմ հընարիւք զինուելով,
Նոր Վանդալներուն լարեց որոգայթ՝ գեղեցիկ դարան
Եւ ի կորուստ նոցին թողուց ըզՄոսքուան,

Քաղաքացիք
Մեծ ու պըզտիկ
Հաւաքուեցան արտորնօք,

Ելան քաղքէն ամիսլ թամիսլ տուն տընորդոք,
Ինչ կերպով որ փեթակէն
Մեղուները դուրս կելնեն։

Ագռաւին մէկը երդիք մը կեցեր,
Հանդարտ հանդարտ կըտուցիկը կըսըրբէր,
Ու այն իրարանցումին վըրայ պաղ պաղ կընայէր։
«Հապա դուն սանամաը, դուն ալ ճամբայ չէս ելներ»
Կանչեց հաւերէն մէկը սայլին մէկուն վրայէն.
Զըլսեցիր, թըշնամին չեմը հասեր է կըսեն»։
Ագռաւն ըսաւ, «Ինծի՛ ինչ. ես չեմ շարժիր իմ տեղէս,
Զերիններուն բանն ուրիշ է՝ խօմ գիտես.

Իսկ ագռաւը ոչ կըխորվեն
Ոչ կը խարշեն.
Ուստի գուցէ այն հիւրերուն հետ ես բանըս կըշըտկեմ.
Ո՛ գիտէ, գուցէ նաև ատեն ատեն ձեռք ձըգեմ
Կամ պանրի կըտորիկ մը,
Կամ միս և կամ ոսկորիկ մը.
Իսկ քեզ բարի ճանապարհ,
Հաւիկ սանամարը»։
Ագռաւն իրաւ որ չըզընաց,
Հոն մնաց,
Բայց հարկիքներ գըտնելու տեղ տես ինչ փորձանք
գլխուն եկաւ.
Քուէքուզովին երբ հընարքովը թըշնամեաց մէջ ընկաւ,
Ինքը Ագռաւը ձեռք ընկաւ
Ու թշնամեաց ապուր եղաւ։
Այսպէս մարդըս շատ անգամ
Կոյր է մըտօք ու յիմար.
Բաղդը անկեղծ բարեկամ
Կըկարծես քեզի համար,
Բայց ագռաւին նըմանակ
Դուն ալ կընկնիս ի պընակ։

Այս առակի մէջ նկարագրուում է ֆրանսիացիների թշնամութիւնը Մոսկւայում սովատանջ լինելը։ Ագռաւը Նապալէօնն է, որ իր հաշիւների մէջ սխալեց։ Նոր վանդալները ֆրանսիացոց է ասում։

Նապալէոնը դիտում է Կրէմլից հրդեհը

ՍԱՅԼԵՐ

Պըտուկներով լըցուած սայլեր
Գեղէն քաղաք մը կերթային.
Տեղ մը հասան խիստ գարխվէրը,
Պէտք էր անկից վար իջնային։
Սայլավարը կանգնեցուց սայլերը լեռան ծայրը,
Ու միայն առջևէնը կիջնցընէր կամաց կամաց.
Առջևին ձին ալ ընտիր, ազէկ բռնեց գառիվայրը,
Եւ սայլը առաջ կերթար հանդարտ հանդարտ ու անկասկած։

Ետևի ձիոց մէկը, դեռահասակ ու տաքարիւն,
Անդադար յիշող կուտար և նախատինք այն խեղճ ձիուն.
«Վայ կաշուդ, կըսէր անոր, գուն ալ ձի ես հա՜, այ յիմար.

Տեսէք ինչպէս քովմնց կերթայ. ձի չէ, հապա իսկ
խեչափար.
Ծօ ծուռ է ծուռ.—տեսէք ինչպէս քարի զարկաւ.
Չա՛ քեզ տեսնեմ հա.—ա՛ռ քեզի. մէկ մ՛ալ զարկաւ։

Ծօ դէպ ի ձախ բըռնէ ձախ.
Ա՛յ աւանակ խելաբախ.
Գոնէ ըլլար երթալիքը դարն ի վեր,
Կամ թէ ցորեկ չըլլար, հապա մութ գիշեր.

Իսկ այս ճամբան է դարն ի վար,
Ցորեկ ատեն, արև պայծառ.
Վըրադ նայող ձիուն սիրտը կը պատռի.
Մինթէ լաւ չէը որ լըծուէիր տակառի,
Ջուր կըբերիր գըռնէ դուռ,
Քան թէ այդպէս սայլ քաշէիր ծուռ ու մուռ։

Հիմա տեսնես
Ես ինչ կերպով
Շարժելուս պէս
Սայլով մայլով

Կըլտըր կըլտըր կիջնամ վերէն մինչ ի վար,
Մինչև սանձակն ալ իմ սայլէս շուտ չերթար»։
Այս ըսաւ, շըտկըւեցաւ՝ կուրծքը տընկած,
Պարծենկոտ ձին ճամբայ ելաւ.
Բայց դարին կէսն եկած չեկած՝
Սայլը եահէն հըրել ըսկըսաւ.

Կըզարնըւի քամակին
Դէպ ի մէկդի կերթայ ձին.
Մէկ մ՛ալ յանկարծ վեր ցատքելով
Զարնըւածքէն՝ կը յարձըկի խեի պէս,

Ոչ քար ոչ փոս նայելով,
Կիջնայ վերէն սաստկապէս.
«Զախին բըռնէ ծօ ծախին»։—Որո՞ւ կըսես.
Կերթա՛յ՝ աչքը մութ կոխած, ու վերջապէս

Սայլն ալ ինքն ալ փոսը կիյնան թևքէր մեքէր.
Երթաք բարով պըտուկներ։

Որչափ մարդիկ այս պակասութեանը տէր են.
Այլոց ամէն ըրածին մէջ մեծ սըխալներ կըգըտնեն.
Իրենք ըսես՝ ինչ գործի ալ ձեռք գարնեն,
կըխանգարեն կըձըգեն։

Սայլավարը կուտուզովն է, որ իր դանդաղ գնացքով, մի քանի տաքարիւն զօրավարների կողմից սկզբում կըշտամբուում էր։

Զէնքը ձեռքիդ ?—Գնդակահար անել
Ալէքսանդր III պատկերասրահում.

ԿԱՏՈՒԱԶՈՒԿ ՈՒ ԿԱՏՈՒ

Վայ ան խորտկին
Որ կօշկակարն է եփեր,
Վայ ան կօշկին
Որ խոհարարն է կարեր։
Հազար անգամ լսած կըլլայ ամէն մարդ
Թէ մարդըս ձեռք պէտք չէ զարնէ այն բանին
Որ յարմար չէ իւր վիճակին, կամ բարքին.
Բայց որո՞ւ կըսես.
Անոր ներհակ՝ կըտեսնես
Որ մարդկանց շատը յանդուգն է և հպարտ.
Աւելի գործը խանգարել յանձն կառնուն
Ու ծաղր ըլլալ ամենուն,
Քան թէ մըտիկ ընել գիտնոց խրատին
Ու չըմոռնալ իրենց ուժն ու չափերնին։

Կատուաձուկին
Օր մը խելքին
Ջեմ գիտեր ինչ կըփըչէ,

«Ես ալ կատուին
«Վարպետ գործին
«Եկուր ձեռք զարնեմ» կըսէ.
Կուզես նախանձ սեպէ անոր ըրածը,
Կուզես խարդախ ու վնասակար չարութիւն,
Կամ արդեօք միշտ ձուկ ըլլալով կերածը,
Վրան եկած էր տեսակ մը ձանձրութիւն.
Ինչ և իցէ, միտք ըրաւ,
«Կատուին խնդրեմ ես, ըսաւ,
Որ ինձի ալ սովրեցընէ
Թէ մուկ բըռնելն ընտոր բան է»։
Փիսիկն ըսաւ կատուաձուկին
Թէ «ինչ կըսես, բարեկամ,
Տեղեակ ես դուն այս արհեստին.
Ես քու վըրադ կըխըղճամ.
Վախեմ թէ դուն չես պաշարեր,
Յաթք կըլինիս իբը անփորձ.
Ոամկաց առակը միտքըդ բեր,—
Լոկ վարպետին գործն է գործ»։
—«Է՜հ բարեկամ, ինչեր կըսես.
Մուկ բըռնելն ալ բան մըն է.
Այս իմ դունչըս որքան գիտես
Օձաձուկեր բըռներ է»։
—«Թէ որ այդպէս է, եկ երթանք մեր մառան»։
Գնացին մառան, մէկմէկ անկիւն պըպղեցան.
Կատուն իւր բունը պըրծուց,
Լաւ մը փորը կըշտացուց.
Յետոյ ելաւ կատուաձուկին մօտ գընաց,
Տեսնէ որ խեղճը հոգեվարք է ընկեր,
Բերանը բաց, աչուընները մուխ կոխած,
Մկներն ալ պոչն են կերեր։
Հասկըցաւ որ այն կորիճը
Մուկ բըռնելու կորիճ չէ.
Քաշեց տարաւ մօտի լիճը՝
Որ գէթ շունչը հոն փըչէ։
«Ինձդ կատուաձուկ, գընա սովրէ
Որ մուկ բըռնել քու բանդ չէ»։

Կատուաձուկը ծովակալ Զիգագոզը է, որ կամենում էր Նապալէօնի ճանապարհը կտրել, բայց հանդիպեց ձախորդութեան։



Պետրովսկի պալատը Մոսկվայի շրջակայքում

Այստեղ էլ մի ուժամանակ մնաց Նապոլէօնը

Նապաստակները սրբենս Մուրատի երեխաների մոտ

Վերցայլի պատկերասրահ.

Ատաղձագործը եւ ասեղնագործ աղջիկը

(Պատմական անցք, Փուրմանից)

I

ՓՕՂԼԻՓԻՆԱ ԲՕԴՄԲԼԻ ԲԱԽՏԱԻՈՐ ՄԱՆՐԸ

արիկից երկու լիո հեռաւորութեան վրայ գտնուող Կրուասա գիւղում շատ համեստ կերպով ապրում էր մի կին իր երկու երեխաների հետ։

Այդ կինը դեռ չահել էր։ Չընայած նրա երեսի վրայ դժբախտութիւնների առաջացած հետքերին, այնուամենայնիւ նա դեռ ևս գեղեցիկ էր երևում։ Նրա ամեն մի շարժուածքի մէջ արտայայտւում էր քնքշութիւն և ազնւութիւն։ Նրա երկու երեխաները, որոնց նա այնքան սիրում էր, իր քնքոյշ և անխոնջ հոգատարութեան առարկաներն էին համարւում։ Նա ինքն էր նրանց դաստիարակում—և այնպէս էր նրանց մասին հոգում, որ պառաւ և բարի դայեակին, նրա մօտ միակ ծառայողին, իսկապէս ոչինչ չէր մնում անելու։

Գիւղերում և փոքրիկ քաղաքներում, առհասարակ, շատ

են սիրում հետաքրքրել ուրիշի գործերով, և այդ պատճառով էլ Կրուասալի բոլոր բնակիչները շատ կարծիքներ էին անում երիտասարդ կնոջ և երկու գեղեցիկ երեխաների մասին և որ վերջիններս այնպէս լաւ դաստիարակւած, մաքուր և քաղաքավարի էին, որ, չընայած հետաքրքրող կանանց նախանձին, որ չէին կարողանում իմանալ այդ համեստ և սիրելի ընտանիքի գաղտնիքը, այնուամենայնիւ, նրանք վարւում էին նրանց հետ քաղցր և մինչև անգամ պատւում էին։

Ծորհրդաւոր կնոջ որդուն, որը մեծն էր, Եւգենի էին կոչում, իսկ աղջկանը՝ Ֆօրտէնզիա։ Ֆոյը և եղբայր սիրում էին իրար այնպէս քնքոյշ, որպէս սիրում էին իրանց՝ մայրը և բարի դայեակը։ Նրանք քաղցր էին վարւում բոլոր բնակիչների հետ, բայց այնպէս համեստ և ծածկամիտ էին, որ ոչոք գիւղի մէջ ոչ մի բան նրանց անցեալի մասին չէր կարողանում իմանալ։

— Դա, ճիշտ որ, մի որ և է անանկացած վաճառականի այրի է, ասում էին մի քանիսները։

— Էհ, չէ,—պատասխանում էին մւսնները, չէ կարող այդպէս լինել. նա նմանում է աւելի պատւաւոր մարդու կնոջ, քան վաճառականի։

— Ամենից ուղիղը նա է, որ դա մի որևէ ci-devante է։

Այդ անունով էին կոչում Ֆրանսիայում յեղափոխութեան ժամանակ նշանաւոր կանանց, և որի մասին էլ վերաբերում է մեր այս պատմութիւնը։

— Ոչ,—շարունակում էին վիճել հետաքրքրողները,—եթէ նա ci-devante լինէր, չէր բնակւիլ մի այդպիսի աղքատ բնակարանում։

— Այդտեղ ինչ զարմանալու բան կայ։ Աղքատ բնակարանը, այնուամենայնիւ, լաւ է բանտերից, որոնց մէջ նրանց նստեցնում են։

— Ենթադրենք թէ այդպէս է. բայց հաւատալի է, որ ci-devante-ը իր որդուն վճռէ դարձնել հիւանը, իսկ աղջ-

կանը՝ ասղնեգործ... Մի՞թէ Թոյլ կըտայ իրան պատւաւոր կինը, աղջկանը քարշ գալ այծի յետևից, որպէս մի հասարակ գեղջկուհի։ Է՛, չէ՛, նրանք բաւական հպարտ են լինում։

— Ի զուր էք դուք այդպէս ասում,—միջամտեց Ծերունի Դիւպէրօնը, որը Կրուասայի առաղձագործն էր և գիւղում ամենապատւաւոր մարդն էր համարւում թէ իր շնորհալիութեան համար և թէ նոյնպէս նրա համար, որ նա ոչ մի ժամանակ չէր մասնակցել այդ ժամանակւայ պատահած անկարգութիւններին։—Հաւատացէք ինձ, անւանիների մէջ էլ կան այնպիսիները, որոնք հասկանում են, որ ամենից հալալ հացի կտորը այն է, որ ձեռք է բերւած արդար աշխատանքով...

— Ճիշտ է, ճիշտ է, հայր Դիւպէրօն։ Դուք ամեն ժամանակ պաշտպանում էք անծանօթներին, որովհետև Շանաչում էք նրանց, ասաց գիւղացիներից մէկը, բոլորովին բաւականացած իր խօսքերի հեգնօրէն լինելուց։ Յետոյ աւելացրեց. հա, հայր Դիւպէրօն, դուք գիտէք բոլորը, որովհետև այդ անծանօթ կանայքը, այսինքն մատաղահաս կինը և նրա սևահեր աղախինը, իրանց փոքր Եւգենիին ձեզ մօտ սովորելու են տւել. լաւ հիւան կըդառնայ այդ շէկ-գանգրահեր ազնւազարմը!

— Ի հարկէ լաւ կըլինի, որովհետև, այդ շէկ-գանգրահեր ազնւազարմը, ինչպէս դուք անւանում էք նրան, այժմ իմ արհեստանոցում ամենալաւ աշակերտն է։ Նա իրան շատ վայելուչ է պահում և ես նրա մօտ եղած մի պակասութեան մասին միայն գիտեմ—որ ինձ անդադար հարցնում է.—«է՛, ինչպէս է, տէր, շուտով կըսկսեմ ես փող աշխատել»։—Տեսնենք, պատասխանում եմ ես նրան, և նա խօսքը հառաչում է։

Այս խօսակցութիւնից, սիրելի բարեկամներ, դուք տեսնում էք, որ Կրուասայի բնակիչները շատ էին հետաքրքրւում իմանալու՝ ովքեր էին այդ անծանօթները, որոնք բնակութիւն էին հաստատել իրանց գիւղում։ Այդ

օրինակ հետաքրքրութիւնը բոլորովին ներելի է այն մարդկանց համար, որոնք վարում են հանգիստ և առանձնակեաց կեանք, և որտեղ փոքրիկ մի դէպքը, որ պատահում է նրան սահմանափակ շրջանում, մի մեծ և նշանաւոր անցք է թւում նրանց։

Մտնենք այժմ համեստ տնակը, ուր ապրում են մեր անծանօթները, և լսենք նրանց խօսակցութիւնը, որից մենք, շատ կարելի է, կիմանանք այն գաղտնիքը, որ այնքան հետաքրքրում էր գիւղացիներին։

Պատուհանի մօտ կանգնած էր Եւգենին և գլուխը կռներին յենած՝ խորը մտածում էր։ Քիչ հեռու նրանից, նստած էր նրա քոյրը՝ ձեռագործը ձեռին։ Նա թողել էր գործը և քնքոյշ կերպով նայում էր եղբօր վրայ։

Նկատելով, որ եղբայրը մտածողութեան մէջ է, նա կամաց վեր կացաւ տեղից, ձեռագործը աթոռի վրայ դրեց, առանց շշուկի, մօտեցաւ եղբօրը, և գրկեց նրան մէկ ձեռքով։ Քրոջ քնքոյշ և սիրալիր շոյումը ցրեցին Եւգենիի մտածմունքները։

— Ի՞նչ է քեզ պատահել, սիրելի Եւգենի... Ասա, ինչո՞ւ համար ես դու այդպէս մտածման և տխրութեան մէջ ընկղմած։

— Ոչինչ, սիրելի Դորտէնզիա, ոչինչ...

Քրոջ իր հետ ունեցած սիրալիր վարմունքից զգացած, Եւգենին գրկեց նրան և համբուրեց։ Յետոյ երեսը դարձրեց և խորը հառաչեց։

— Ահա տեսնում ես, դու կրկին հառաչեցիր, ասաց Դորտէնզիան։

— Չէ, ճշմարիտ, ոչինչ չըկայ...

— Սուտ ես ասում, Եւգենի, սուտ։ Քեզ մի ինչ որ գաղտնիք ունես և դու այդ ինձնից թագցնում ես։ Մի՞թէ այդ լաւ է։ Քեզ ունես ծածուկ բաներ, որոնք թագցնում ես քրոջիցդ, որը, քեզ այնպէս սիրում է... Ո՛հ, ինչպէս այդ վատ է։

Երիտասարդ աղջիկը հեռացաւ եղբօր մօտից և սկսեց իր գործին կենալ։

— Սիրելի Գորտէնզիա, ինչո՞ւ համար պիտի քեզ ախրեցնեմ։ Եթէ դու ինքդ չես նկատում այն, ինչոր ես զգում եմ, ուրեմն ինչո՞ւ համար պիտի քայքայեմ քո բախտաւոր հանգստութիւնը։ Աւելի լաւ չէ՞ որ միայնակ ես տանջւեմ։

— Ամենևին, մենք քոյր և եղբայր ենք, հետևապէս, պէտք է միասին տանջւենք,—զգացած վրայ բերաւ Գորտէնզիան։

Եւգենին գլուխը կորացնելով՝ մի բոպէ լռեց, յետոյ արտասանեց հազիւ լսելի ձայնով.

— Մայրիկը...

Այս բառը արձագանք տւեց ջահել աղջկայ սրտի մէջ։ Նա տեղից վեր թռաւ, ընկաւ եղբօր գիրկը և արտասւախառն գոչեց.

— Ոհ, այո, մայրիկը դժբաղդ է։

Եւգենին զարմացմամբ նայեց քրոջ վրայ և հարցրեց.

— Մի՞թէ դու այդ նկատել ես, Գորտէնզիա։

— Նկատել եմ։

— Եւ ոչ մի ժամանակ ինձ այդ մասին ոչինչ չե՞ս ասել.

— Ես չէի ուզում քեզ վշտացնել։

— Եւ դու ինքդ չէի՞ր ախրում, չէի՞ր վշտանում։

— Եթէ դու կարողանայիր իմանալ թէ որքա՜ն ճիգ էի թափում ուրախ ձևանալու։

— Ո՛հ, Գոնտէնզիա, սիրելի քոյրիկ. ինչքա՜ն ես փոքրոգի եմ եղել համեմատած քեզ հետ... Ինքս ախրում էի, մինչդեռ ես պիտի օրինակ լինէի քեզ ամուր ճնալու։

— Սիրելի Եւգենի, իրաւ մօտ սրտեր բանալը ամուր ճնալուց լաւ է։ Մէկս միւսին հաւատ ընծայենք, մեր սրտերը իրաւ յայտնենք, շատ կարելի է, մի միջոց գտնենք, որով գուցէ կարող լինենք հանգստացնել մեր խեղճ մօր վշտերը։

— Դու նկատե՞լ ես թէ ինչպէս նա տխուր է. չընայելով իր ունեցած ջանքերին, այնուամենայնիւ, նա չէ

կարողանում թագցնել մեզնից արտասուքի կաթիլները, որոնք մեզ համբուրելու ժամանակ թափւում են նրա աչքերից։

— Ոհ, նա մեծ բան է զոհել՝ միայնակ բնակութիւն հաստատելով այս հեռու գիւղի մէջ, առանց որևէ ծանօթի։

— Եւ այդ բոլորը մեզ համար է։

— Սովոր լինելով բաւականութեան, շքեղութեան, այժմ նա ստիպւած է մեզ արհեստի տալ, որպէսզի մենք ինքներս կարողանանք ճարել մեր օրւայ հացը։

— Ախ, Եւգենի, ես ոչ մի բանի համար չէի հոգալ, միայն թէ մայրիկը բախտաւոր լինէր։

— Ի հարկէ, մենք դեռ ևս ջահել ենք, կարող ենք ամեն բանի ընտելանալ... Հապա խեղճ մայրիկը... Զրկւած լինելով իր ամբողջ ունեցածից, ծնողներից և առհասարակ այն ամենից, որոնք նրա համար թանգ էին...

Եւ երեխայքը վշտացած՝ գլուխները կախ ձգեցին։

— Մեր սիրելի հայրը կորաւ... կախաղանի վրայ,— շարունակեց Եւգենին,—և նրա միակ յանցանքն այն էր, որ կուռւմ էր հայրենիքի համար... Եւ այդ պատճառով կորաւ նա, որպէս մի եղեռնագործ...

— Որպէս մի նահատակ,—վրայ բերեց Դորտէնզիան, գլուխը հպարտ կերպով բարձրացնելով։

— Ընկաւ նա եղեռնագործների հրամանով, որոնցից ես, ժամանակով, հաշիւ կըպահանջեմ նրանց շնորհիւ թափւած արդար արիւնի համար... գոչեց Եւգենին, պլպլող, բողոք արտայայտող աչքերով։

Իւ երեխայքը նորից արտասւեցին, միևնոյն ժամանակ մտածելով, թէ ինչ կերպ կարողանան թեթևացնել իրանց սիրելի մօր վշտերը։

— Մայրիկի անւանակոչութեան օրը մօտենում է, ասաց Դորտէնզիան,—հարկաւոր է մի ինչ որ բանով ուրախացնել նրան։ Դու գիտես, Եւգենի, թէ ինչպէս մայրիկը անհանգիստ է լինում մեր ապագայի համար և թէ ինչպէս նա ցանկանում է, որ մենք շուտով սովորենք մեր

արհեստը, որ նա ինքը ընտրել է մեզ համար...

— Այո, այո, մի բան նվիրենք մայրիկին: Դու ո՞րքան փող ես աշխատել մինչև այժմ:

— Ամբողջ մի լուիդոր: Իսկ դո՛ւ, Եւգենի:

— Ես աշխատել եմ մօտ յիսուն ֆրանկ թղթադրամ. բայց որովհետև այժմ թղթադրամների արժէքը ընկած է, դրա համար իմս քո լուիդորից քիչ կարող է լինել:

— Ի՞նչ նվիրենք ուրեմն մայրիկին, հարցրեց Գորտէնզիան:

— Հարկաւոր է այդ մասին մտածել...

Հէնց այդ ժամանակ մի ձայն լսւեց:

— Ո՛ւ... Մէկը գալիս է, ասաց Գորտէնզիան: Մտածի՛ր, Եւգենի, մենք երեկոյեան այդ մասին կրկին կըխօսենք:

Երեխայքը բաժանւեցան:

Գեղեցիկ մատաղահաս աղջիկը գնաց պարտէզը և այնտեղ, ծնկաչոք ընկնելով Աստւածամօր պատկերի առաջ, որի հովանաւորութեանն էր յանձնւած անշուք տնակը, սկսեց ջերմեռանդ կերպով աղօթել...

Երեկոյեան դէմ երեխաները զբօսնում էին լայն փողոցում և խօսակցում էին այն մասին, թէ ինչ նվիրեն իրանց սիրելի մօրը: Նրանք երկար մտածում և դատում էին, սակայն ոչինչ չէին կարողանում վճռել:

Վերադառնալով տուն, ճանապարհին նրանք հանդիպեցան մի աղքատ և նիհար ծերունու: Ողճահարւելով անբախտ ծերուկի դրութեան վրայ, երեխայքը մօտեցան նրան, խօսացին նրա հետ և իմացան, որ նրան այդօրինակ աղքատութեան մէջ ձգողը անգութ հրդեհն է եղել:

— Եւգենի՛, դուչեց յանկարծ ջահել աղջիկը,—մայրիկին սրանից լաւ ընծայ պարգևել մենք չենք կարող... Օգնենք մեր ունեցած փողով այս խեղճ ծերունուն:

— Ո՛րպիսի գեղեցիկ միտք, պատասխանեց Եւգենին: Եւ երեխայքը արագ տուն վազելով, իրանց աշխատած փողը բերին և տւին աղքատին...

Մօր անւանակոչութեան օրը նրանք իրանց մայրիկին տարան Ծերուհու քնակարանը, որը, իրանց շնորհիւ, փըրկւած էր աղքատութիւնից և յուսահատ դրութիւնից... Ծերուկը բոլորովին բախտաւոր էր զգում իրան,—ոչ թէ նրա համար, որ նրանց տւած գումարը ապահովում է իրան մինչև իր կեանքի վախճանը, այլ որ, այդ օժանդակութիւնը նորից ծագեցրեց իր մէջ յուսոյ ճառագայթները և տւաւ նրան կարողութիւն՝ կարգի բերելու իր մի քանի գործերը։

Ծերուհին ու իր ընտանիքը Գորաէնզիայից և Եւգենիից օրհնում էին... Վերջիններիս մայրը անպատմելի կերպով բախտաւոր էր զգում իրան, որովհետև, երեխաների բարի վարմունքը — մօր վշտերն ու տանջանքները թեթեւացնելու ամենագեղեցիկ միջոցն է։

II

ՆԸՊՕԼԻՕՆ ԲՕՆԱՊԱՐՏ

Այդ անցքից մի քանի օր անցած, մի շքեղ կառք, չորս գեղեցիկ ձիաներ լծած, մտաւ Կրուասա գիւղը։

Կառքը կանգ առաւ ուղիղ գիւղի մուտքի առաջ։ Նշանագգեստ հագած ծառան թռաւ իր տեղից, մօտ գնաց կառքի դռներին, լսեց այնտեղ նստած պատւաւոր պարոնի տւած հրամանը, և գնաց դէպի գիւղի ծայրում գտնւող տունը, որի շէմքի վրայ կանգնած նայում էին հետաքրքիր գիւղացիները։

— Ո՞րտեղ է բնակւում տիկին Ժօզէֆինա դը՛Բօգարնէն, հարցրեց ծառան գիւղացիներին։

Վերջիններս իրար նայեցին զարմացմամբ և, վերջապէս, նրանցից մէկը հարցրեց ծառային.

— Ո՞ւմ մասին էք հարցնում։

— Տիկին դը՛Բօգարնէի։

— Այդպիսի ազգանուն մենք չենք լսել։

— Ծառան վերադարձաւ պարոնի մօտ։ Վերջինս զարմացմամբ ուսերը թափ տւեց և հրամայեց ծառային գնալ ուրիշ տեղերից հարցնել։

Երկար վնտրելուց յետոյ, ծառան պատահեց դայեակին։ Լսելով այն անունը, որ գիւղացիներին անյայտ էր, դայեակը շշկլւած նայեց ծառայի վրայ և վերջապէս պատասխանեց, որ ինքը ծառայում է այն իսկ կնոջ մօտ, որին նա փնտրում է։

Մի քանի րոպէ չանցած, լիշեալ կառքը կանգնեց անծանօթ կնոջ տնակի առաջ։

Պարոնը, որը կառքով եկել էր, Բարրա հիւպատոսն էր։ Տիկին Ժօզէֆինա դը'Բօգարնէյին նա լուր էր բերել, որ բոլոր նրա ունեցածը վերադարձրւած է իրան և որ նա նորից կարող է իշխել նրանց։

Երևակայեցէք ձեզ Գորտէնզիայի և Եւգենիի ուրախութիւնը, երբ նրանք իմացան, որ իրանց մօր վշտերը պիտի անցնեն...

Ժօզէֆինա դը'Բօգարնէյին, որին այնպիսի մի վսեմ բախտաւորութիւն էր սպասում, վերադարձաւ Պարիզ։ Պարոն Բարրան շքեղ խնճոյք կազմեց, ուր տիկին դը'Բօգարնէյն փայլում էր իր խելքով, հրաշալիութիւնով և հոգեկան գեղեցիկ յատկութիւններով։

Գեներալ Բօնապարտը յաճախ ներկայ լինելով այդ խնճոյքներին, տեսաւ Ժօզէֆինա դը'Բօգարնէյին, թովւեց նրա գեղեցկութիւնից և զգացմունքների վսեմութիւնից։

Մի առաւօտ, երբ Բօնապարտը նախաճաշիկ էր արել, նրան յայտնեցին, որ մի ինչոր երեխայ կամենում է իրան տեսնել։ Գեներալը, այդ րոպէին զբաղւած լինելով Իտալիայի դէմ արշաւանքի ծրագիրը կազմելու տենչով, հրամայեց պատասխանել, որ այժմ ժամանակ չունի։ Բայց երեխան յամառ կերպով պահանջեց, որ իրան թոյլ տրւի, և ասաց, որ յետ դառնալ չէ կարող, մինչև որ գեներալին չըտեսնէ։

Բօնապարտին այդ շատ զարմացրեց և նա հրամայեց

կանչել երեխային։ Սկզբից գեներալը ուզեց երեխային խիստ կերպով ընդունել, սակայն երբ նկատեց նրա դէմքի շնորհալիութիւնը և ազնիւ լինելը, ապշած ճնաց և քաղցրութեամբ հարցրեց.

— Ո՞վ ես դու, իմ բարեկամ։

— Եւգենի դը'Բօգարնէ։

— Հա՛, այժմ այլևս չեմ զարմանում քո արտաքին ազնուութիւնից։. Ի՞նչ է հարկաւոր քեզ, իմ սիրելի։

— Ես պահանջում եմ, որ հօրս՝ գրաֆ դէ'Բօգարնէի սուրը ինձ վերադարձնեն։

— Նրան քեզ կվերադարձնեն։

— Ես պահանջում եմ նոյնպէս, որ դուք նրա մահուան վրէժն առնէք։

— Կառնեմ... թէպէտ, բոլոր եղեռնագործների արիւնը չարժէ քո ազնիւ հօր մի կաթիլ արեանը։

— Շնորհակալ եմ, գեներալ։ Դուք քաղցրութեամբ ինձ լսեցիք։ Ես այժմ կարող եմ հեռանալ։

— Սպասիր. բայց մի՛թէ դու քեզ համար ոչինչ չես կամենում խնդրել։

— Ես մինչև այժմ հիւսն լինելով, կամենում եմ այժմ էլ գինւոր լինել։

Գեներալ Բօնապարտը քնքոյշ կերպով ժպտաց։ Նրան շատ դուր եկաւ Եւգենիի քաջարի և քաղաքավարի բնաւորութիւնը։ Թեթև կերպով նրա թշերը շոյելով՝ ասաց նրան.

— Դու քաջ ես և միևնոյն ժամանակ, փառասէր չես։ Քեզանից դժվարի գինւոր կարող է լինել։ Մի երկու տարի էլ սպասիր, այնուհետև առաջին արշաւանքիս քեզ հետս կվերցնեմ։

Մի քանի խօսքով կըպատմեմ ձեզ այս անցքի վերջաբանը, իմ սիրելի՛ բարեկամներ։

Տէրը վարձատրեց խոնարհութիւնը և ժուժկալութիւնը այն կնոջ, որին Կրուասայի բնակիչները անծանօթ կին էին անուանում։ Ժոզէֆինա դը'Բօգարնէն ամուսնացաւ

Բօնապարտի հետ և երկար ժամանակ կենակցեց այդ մեծ և հանճարեղ մարդու հետ։ Թագաւորական թագը զարդարեց նրա գլուխը։ Սակայն, թէ՛ մեծութիւնը և թէ՛ չքեղութիւնը չէկարողացան նրա սրտի մէջ բաբախող ողորմութեան ձայնը լռեցնել...

Ֆրանսիացիները օրհնում էին նրան և ժողովրդի ընդհանուր ձայնը նրան Ֆրանսիայի բարի հանճար էր անւանում։

Նրա՝ երեխաների վիճակը, որ իր վրայ էր առել նոր ժամանակների կեսարը,—շատ լաւ էր անցնում։ Աստղաձագործի աշակերտ Եւգենին դարձաւ Իտալիայի փոխարքայ, իսկ չահել աղնեզործ աղջիկը, Գորտէնզիան, բազմեց Հոլանդացոց թագաւորական աթոռի վրայ...

Հեռու Ֆրանսիայից, իր հայրենիքից, որի համար ամեն ժամանակ բաբախում էր նրա բարի սիրտը, մեռնելով Եւգենին, նա չըմոռացաւ կրուասայի ծերը հիւանդին։ Իր կտակի ամենաառաջին կէտում, այդ պատւելի և բարի արհեստաւորի համար ուճիկ էր նշանակել, որով նա օգտւեց մինչև իր կեանքի վախճանը...

Ոսկեզօծ տառերով արձանագրւած է այդ բարեգործութիւնը Անմահութեան գրուս։ Եւգենի դը'Բօգարնէն մեծահոգութիւնով վճարեց իր երախտագիտական պարտքը, սրտի այդ յիշողութիւնը, որին շատերը կորցնում են իրանց բարեբախտութեան ժամանակ...

(Ապրիլ 1908 թ.) *Ք. Թումեան*

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

1812 ՏՕՆԱԽՄՈՒԹԻՒՆԸ 1912

(ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻՄԸ)

Շաբաթ օգոստոսի 25-ին, Բօրօդինեան ճակատամարտի նախօրեակին, Ռուսաստանի բոլոր եկեղեցիներում և տաճարներում կըկատարուեն մաղթանքներ և հոգեհանգիստներ Ալէքսանդր I Կայսեր և հայրենական պատերազմում ընկած բոլոր հերոսների յիշատակին: Այդ օրը Բօրօդինեան դաշտում կըհաւաքուեն բոլոր զօրամասերը և այն ներկայացուցիչները, որոնք պիտի մասնակցեն հանդէսներին: Բօրօդինեան ճակատամարտի յօբելեանի օրը, 2 և կէս ժամին Բաւսկու բատարէայի մօտ կըժողովուեն Նորին Կ. Մ. Թագուհի Կայսրուհու Ալէքսանդրա Ֆեօդօրովնայի շքախումբը, մինիստրների խորհրդի նախագահը և խորհրդի անդամները, բարձրագոյն զինուորական հիմնարկութիւնների ներկայացուցիչները, ծովային և զինուորական մինիստրներից նշանակած գեներալները, ծովակալները, բարձրագոյնս հաստատուած Հայրենական պատերազմի յօբելեանական հանդէսների միջվարչական յանձնաժողովի անդամները, Մոսկուայի քաղաքապետը և նահանգապետը, նահանգական ազնուականութեան պարագլուխը, զեմստվային վարչութեան նախագահը և անդամները, Մոժայսկի գաւառի պետական գործիչները, քաղաքային ստարոստան և Հայրենական պատերազմին մասնակցողները: Բօրօդինեան դաշտում զօրքերը կըզտնուեն



Կոթող 1812 թ. Բո-
ռոդինի ճակատամար-
տում ընկած հերոս-
ների յիւսատակին

շարքով։ Զինուորական վարչութեան կարգադրութեան համաձայն, բոլոր զինուորական պաշտօնեաները կըկրեն ամարային նշանագգեստներ, իսկ քաղաքացիականները՝ որոշ ձեւի կիրեներ։

Նորին Կ. Մ. Թագաւոր կայսրը, Թագուհի Ալէքսանդրա Ֆեօդօրովնան, Թագաժառանգը, Օգոստափառ դուստրները, նոյնպէս և Մեծ իշխանները կը բարեհաճեն անցնել Բօրօդինեան արձանի և Բաւսկու բատալիէյի շուրջը դասաւորուած զօրքերի առջեւից, որից յետոյ կըդիմաւորեն Սմօլենսկուց յետոյ Տիրամօր նկարին և թափօրին։ Թափօրը կըկանգնի Բօրօդինեան ճակամարտի յիշատակին կանդնեցրած արձանի առաջ, ուր նորին սրբազնութիւնները Մոսկւայի և Կօլօմնայի միտրօպօլիտները մաղթանք կըկատարեն Ալէքսանդր I կայսեր և ընկած հերոսների յիշատակին։ Այդ օրը բոլոր զինուրական-կրթական հիմնարկութիւններում կը կարդացուին դասախօսութիւններ՝ Հայրենական պատերազմի պատմական նշանակութեան մասին և կըցուցադրուին նկարներ մոգական լապտերներով։ Օգոստոսի 27-ին Ռուսաստանի բոլոր եկեղեցիներում և զինուրական նաւերի վրայ կըմատուցուին հանդիսաւոր պատարագներ Ալէքսանդր I-ի և հերոսների յիշատակին, քարոզներ կըխօսեն եպիսկոպոսները և կարտասանուեն աղօթքներ Ն. Կ. Մ. կայսերական Տան արեւշատութեան և յաջողութիւնների համար։ Մաղթանքներից և աղօթքներից յետոյ տեղի կունենան բոլոր զօրամասերի զօրահանդէսները, զինուրական վարչութեան յուցմունքների համաձայն։ Զօրահանդիսին կըմասնակցեն քաղաքացիական վարչութեան ենթարկուող կրթական հիմնարկութիւնների սանները։

Զօրախաղից յետոյ հրամանատարները կըկարդան Բարձրագոյն ուխտը ցամաքային և ծովային զօրքին ուղղած։

Ռուսաստանի կայսրութեան մէջ եղած բոլոր դպրոցներում տեղի կունենան հանդէսներ և կըըժանուեն գրքեր ու գրքոյկներ հայրենական պատերազմին վերաբերեալ։

Այդ օրը բոլոր դպրոցական, արքունական և դաստատնական հաստատութիւնները պէտք է զարդարուեն դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորուեն։ Օգոս-

տոսի 26-ին, առաւօտեան ժամը 7-ին, Բօրօդինեան դաշտից թնդանօթային հինգ հարւածներ կըյայտարարեն Բօրօդինեան կռւի հարիւրամեակի տօնահանդէսը սկսելու մասին։ Սպասսօ-Բօրօդինեան վանքի և Բօրօդինեան կռւի կոթողի պատարագին ու մաղթանքին ներկայ լինելու կը հաւաքւեն ժ. 8¼-ին սրբազան սինոդի անդամները, պալատականները, մինիստրական խորհրդի անդամները, Պետական Խորհրդի և Պետական Դումայի նախագահները, կայսերական շքախմբի անձինք, ազնւականութեան պարագլուխները, բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւնների բարձր պաշտօնեաները, Մոսկւայի նահանգի ու քաղաքի բարձր ադմինիստրացիան, զանազան կողմերից ու զանազան ազգութիւններից եկած պատգամաւորները և հայրենական պատերազմին մասնակցողները։ Բօրօդինեան կռւի կոթողի մօտ առաւօտեան ժամը 10-ին հաւաքւած կը լինեն բոլոր բարձր զինւորականները, զօրամասերի հրամանատարները և շտաբի ու օբեր-օֆիցէրները, զինւորական-դպրոցների սաներն ու զօրքերը, նոյնպէս և հանդէսին մասնակցող բոլոր անձինք։ Հոգեհանգիստը Ալէքսանդր I Կայսրի և Բօրօդինեան կռւում ընկած զօրավարների և զօրականների անունների յիշատակութեամբ կըկատարի այնտեղ Մոսկւայի միտրօպօլիտը։ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհու, Գահաժառանգ Արքայորդու, Մեծ Իշխանուհիների և Մեծ Իշխանների ու Կայսերական Տան բոլոր անդամների հետ միասին և ուղեկիցներով կըգնայ Սպասսօ-Բօրօդինեան վանքը՝ պատարագին ներկայ լինելու, որից յետոյ միտրապօլիտը, շրջապատւած հոգևորականութեամբ, դուրս կը գայ թափօրով դէպի Բօրօդինեան կոթողի առաջ Ալէքսանդր I Կայսրի անունով կառուցւած զինւորական շարժական եկեղեցին։ Թագաւոր Կայսրը և Կայսերական Ընտանիքն ու շքախումբը կըհետևեն թափօրին։ Շարժական եկեղեցում կը կատարւի գոհացողական մաղթանք հայրենիքի ազատութեան համար։ Թագաւոր Կայսրին և Կայսերական Տանը շատ տարիներ երգելուց յետոյ, կերգեն յաւերժ յիշատակ Ալէքսանդր I Կայսրին և Հայրենական պատերազմում ընկած զօրավարներին և զօրականներին։ Այդ միջոցին բոլոր զանգակները կըզանգահարեն, զօրքերը զինւորական պա-

տիւներ կը տան և թնդանօթներից կարձակւեն հարւածներ։ Ցետոյ միտրօպօլիտը օրհնելով ներկայ եղողներին՝ եկեղեցական թափօրով կըվերադառնայ վանքը։ Նոցին ՄեծուԹիւններ Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհուն պալատական մինիստրը կըմատուցանի ի յիշատակ Հայրենական պատերազմի պատրաստւած մեդալներ։ Դրանից յետոյ դինւորական մինիստրը կը կարդայ Բարձրագոյն ուկազը Հայրենական պատերազմի առիԹով ուղղւած զօրքին ու նաւատորմին։ Ուկազի ընԹերցումը վերջանալուց յետոյ, զօրքերը կանցնեն հանդիսաւոր քայլերով, որից յետոյ Նոցին Կայսերական ՄեծուԹիւններ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Օգոստափառ Զաւակներով կըմեկնեն Բօրօդինեան պալատը, ուր Բարձրագոյն ներկայուԹեամբ տեղի կունենայ նախաճաշ։ Բարձրագոյն նախաճաշը վերջանալուց յետոյ, Կայսրը և Կայսրուհին Օգոստափառ Զաւակներով կըշրջագայեն Բօրօդինեան կուի դաշտում և ապա կըվերադառնան Կայսերական օթեւանը։ Նոյն օրը երեկոյեան Մայժսկ քաղաքը, Սպասօ-Բօրօդինեան վանքը, Բօրօդինեան դաշտում կանգնեցւած կոթողը և Ալէքսանդրովսկայա երկաԹուղու կայարանները՝ սկսած Բօրօդինայից մինչև Մոսկւա և Մոսկւան լուսավառւած կըլինեն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Աղբիւր-Տարազ միւնոյն հասցէով ստացող բաժանորդներին ներկայ №-ի հետ նւէր է ուղարկուում Զարուհու՝ ԿԱՄՔԻ ՈՑԾԸ — ՆԱՊԱԼԷՕՆ ԲՕՆԱՊԱՐՏ, պատկերազարդ մանկական գիրքը։ Միայն Աղբիւր ստացողներն ուղարկելով 14 կ. պօստի մարկա և իրանց հասցէն կարող են ունենալ այս գիրքը։

Հետևեալ №-ի հետ կըստանան Աղբիւր-Տարազ միւնոյն հասցէով բաժանորդները Գիւղական Ուսումնարան, ճապոն. կեանքից պիէսը, առանձին գրքով։ Միայն Աղբիւր ստացողները կարող են Գիւղական Ուսումնարան պիէսը ստանալ, ուղարկելով հասցէի հետ 14 կ. մարկաներ։

Աղբիւր եւ Տարազի *խմբագրութեան գրասենեակը ու* **Մատուցի Բիւրօ** *յայտնում են, որ մի որևէ № չըստանալու համար բաժանորդը պէտք է իր բողոքը յայտնէ իր բնակավայրի պօստատանը, որտեղից նա ստանում է իր թերթերը, որպէսզի վերջինս յայտնէ Թիֆլիսի կենտր. պօստատան և հնարաւոր լինի կորուստի հետքը գտնելու։ Պարբերական թերթերի՝ իւրաքանչիւր № հաշւով յանձնւում են պօստատան և առնւում ընկալագիր։ Իւրաքանչիւր քաղաքի, գիւղի թերթեր առանձին-առանձին կապւում են, և Թիֆլիսում երբէք չեն կարող կորչել №№-ը, իսկ խմբագրութիւնն էլ բաժանորդի առաջ պատասխանատու չէ, երբ նա ունի №-ը պօստին յանձնածի ապացոյցը։ Ամեն բողոք ճնում է անհետևանք, եթէ բաժանորդը յիշեալ պայմանը զանց առնելով, դիմում է իր պահանջով ուղղակի խմբագրութեան։*

Չի կարդացւում և այն նամակը, որի ճակատին չէ գրւած նամակագրի պարզ հասցէն և ճնում է առանց պատասխանի, եթէ նամակագրողմ չէ ուղարկւած պատասխանի համար։

ԱՂԲԻՒՐԸ՝ ամսական 20 կ., 2 ամիսը՝ 30 կ., 3 ամիսը 50 կ.

Հասցէն՝ **Тифлис.** Редакція „**АГВЮР**“.

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Առաջիկայ հոկտեմբերի 13-ին համայն հայութիւնը տօնելու է ՀԱՅ ԳՐԻ 1500 և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ամեակները՝ Վեհափառ Կաթողիկոսի նախագահութեամբ ս. Էջմիածնում մեր գիտնական բարձրագոյն հոգևորականներից և Գէորգեան Ճեմարանի ուսուցչապետներից կազմուած է Յօբելեանական Կենտրոնական Մասնաժողով։ Ս. Էջմիածին են գնալու հայութեան բոլոր խաւերից պատգամաւորութիւններ և ուխտաւորներ։ Յօբելեանական հանդէսը սկսելու է ս. Միւռոնօրհնէքով (սեպտ. 30-ին)։ Պատարագիչը լինելու է Վեհափառ Կաթողիկոսը տասներկու եպիսկոպոսներով։ Ապա լինելու է եպիսկոպոսական ձեռնադրութիւն, որ եկեղեցական մի շքեղ հանդէս է։ Յետոյ յօբելեանական տօնախմբութիւնը՝ հանդէս, դասախօսութիւններ Ճեմարանում և ուխտագնացութիւն ՕՇԱԿԱՆ, ուր ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ գերեզմանի վրայ կըկատարուի հոգեհանգիստ և յետոյ մաղթանք ու թափօրը կըվերջանայ Օշականի պատմական այգում ժողովրդական մեծ խնճոյքով, շրջակայ վանքերում ուխտագնացութիւնով։

Ազգային այդ ՄԵԾ ՅՕԲԵԼԵԱՆԻ առիթով Աղբիւրի և Տարազի հոկտեմբերի №№-ը ամբողջովին նուիրուում են ՀԱՅ ԳՐԻՆ և ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ։

Աղբիւրի Յօբելեանական այդ №-ը 50 կ., իսկ Տարազը 1 ր. պարզական այն աշակերտների համար, որոնք Տարազ չեն առնում։

Այսօրուանից մինչև հոկտ. մէկը վաճառուում են՝ ս. ս. Էջմիածին, Սահակ, Մեսրոպ Թարգմանիչների, Հայոց Ներսիսեան Հայրիկը Օշականում ընտիր պատկերները 1000 հատը (իւրաքանչիւրից 250 ական օրինակ մի արկղում) 1000 ր.։ Հրաւիրուում են ձեռնհաս հաստատութիւններ ձեռք բերել այդ պատկերները և տարածել հայ ընտանիքներում։

Առանձին-առանձին այդ պատկերների հատը 1 ր.—50 կ.։

Ամենապատեհ նէյր, որ հայութիւնը կարող է տնել ինքն իրան՝ այդ նէյրական չորս պատկերներն են, որ գէթ այժմ հայը պէտք է իր դահլիճները պճնազարդէ։

Типографія «ГЕРМЕС» Графская № 6, Телеф. 566

ՆԱԽԱՏՕՆԱԿ ԱԶԳԱՅԻՆ
ՄԵԾ ՅՕՌԵԼԵԱՆԻ

1500-ամեակ Հայ Տառի եւ 400-ամեակ Հայ Տպագրութեան

Գրական-Գեղագիտական Սալօն

Այսօր, ուրբաթ, հոկտ. 19-ին հերթական jour fixe-ին պրոյ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕՌԵԼԵԱՆԻ և ս. ԷՋՄԻԱԾՆԻ ու Օշականում Յօրելեանական նախատօնական շուրջը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ - ՊԱՏԿԵՐԱՒՈՐ ԶԵԿՈՒՅՈՒՄ արդի հայ երաժշտագէտների և նրանց ստեղծագործութիւնների մասին:

ՈՉՈՒԻ, առանց բացառութեան, յատուկ հրաւէր չէ ուղարկւում: ՆԵՐԿԱՅ VII-րդ 12/13 տարեշրջանի բացման երեկոյթի համար ՀՐԱՒԻՐԱԳԻՐ ՍՏԱՅՈՂՆԵՐԸ—ՀՐԱՒԻՐ- (արուեստագէտներ, գրականագէտներ, գեղագէտներ, լրագրողներ) *ԽԱԺ ԵՆ* իրանց ընտանիքներով սեզօնի բոլոր jour fixe-երին եւ հանդէսներին:

ՄԿԻՉԲԸ ԵՐԵԿՈՅԵԱՆ 8 ԺԱՄԻՆ

№ 10 XXX ՀՈԿՏԵՄԲԵՐ XXX 1912

Ուրբաթ, այս հոկտեմբերի 12-ին ս. Էջմիածնում Հայոց Հայրապետ Վեհափառ Գէորգ Ը. Կաթողիկոսը շրջապատուած արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով Գէորգեան Ճեմարանի ուսուցչապետներով, ուսանողներով, Վաղարշապատի դպրոցների աշակերտներով և շատ տեղերից, այս Մեծ Յոբելեանի առիթով ս. Էջմիածին գնացած, պատգամաւորներով ու ժողովրդով Իջման Տաճարում կատարեց նախատօնակ մեր ս. Թարգմանիչների՝ Սահակի, Մեսրոպի և նրանց յաջորդ մինչև օրս մեր հանդուցեալ բոլոր գրականագէտների յիշատակին։

Հետևեալ, շաբաթ առաւօտ ս. Թարգմանիչների տօնի օրը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը մեծաշուք հանդիսով ուղեւորուեց Օշական, ուր կատարեց ս. Մեսրոպի գերեզմանի վրայ հանդիսաւոր պատարագ, հոգեհանգիստ և ապա Օշականի այգում հրաշափառ հանդէս։ Ներկայ էին աւելի քան երեք հազար հոգի։ Կայացաւ դպրոցում ճաշկերոյթ, ուր խօսեցին և պատգամաւորները։ Երեկոյեան վերադարձան ս. Էջմիածին։

Կիրակի, հոկտ. 14-ին կատարուեցին հանդէսներ թէ Իջման Տաճարում և թէ Գէորգեան Ճեմարանում։

Թարգմանիչների տօնի օրը կատարուել է ամեն տեղ, ուր կայ հայ եկեղեցի, հայ դպրոց, հայ գիր ու լեզու նոյնպէս հանդէսներ։

Թիֆլիսում մեծաշուք տօնեց Հայ Տառի 1500-ամեակի և Հայ Տպագրութեան 400-ամեակի նախատօնակը Աղբիւր - Տարագի Դրական-Գեղագիտական Սալօնը։ Հրաւիրուած էին անխտիր թէ հայ և թէ օտարազգեայ գրականագէտներ, գեղագէտներ, արուեստագէտներ, ինչպէս և մեծ բազմութիւն հասարակական դպրոցական գործիչների ու ներկայացուցիչներ հաստատութիւնների։

Տօնախմբութիւնը սկսեց ուրբաթ, երեկոյեան 8 ժամին Ս. Թարգմանիչների մեծադիր պատկերները խորասուզած ծաղիկների մէջ, պճնազարդուած էին մարմարէ սիւն-սեղանիկների վրայ յունական սափորներում թարմ վարդերով։ Սրանց մէջ տեղը բազկաթոռ և սեղան։ Հանդէսը բացաւ մեր ծերունազարդ ուսուցչապետ և բանաստեղծ Գէորգ Բարխուդարեանը. մի հոյակապ ճառով բացատրեց ս. Թարգմանիչների կատարած մեծ գործի էութիւնը։ Ճառը վերջացնելով, հրաւիրեց հանդիսականներին ընտրել մի նախագահ։ Ժողովրդի միահամուռ բաղձանքը, որ հէնց ինքն էլ ոգևիրայ բանաստեղծն ու ուսուցչապետը նախագահէ, անկարող եղաւ ընդունել, պատճառաբանելով ոյժերի սպառումը։

Ապա ժողովը միաձայն ընտրեց նախագահ բժշկ. Բ. Նաւասարդեանին, որն ստանձնելով պաշտօնը, առաջարկեց նախ Գէորգ Բարխուդարեանին ընտրել պատուաւոր նախագահ։ Որոնցնդոտ ծափահարութիւններով նշանակալից այս վեհաշուք որոշումը կատար ածուեց։ Ծերունազարդ բանաստեղծի բազկաթոռը դրուեց ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերների մէջտեղը, ուր և բազմեցրուեց նա։ Ապա սկսուեց հանդէսը։ Կարդացուեցին ստացած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներից, ուղերձներից, ձօներից մի քանիսը։ Շնորհաւորականներ՝ թէ հայ և թէ օտարազդի գրականագէտներից, արուեստագէտներից, հաստատութիւններից։ Յետոյ սկսեցին ճառախօսութիւնները։ Ատրպետ մի թռուցիկ ակնարկ արաւ հայ գրի մասին, սկսած Քրիստոսից 7—8 դար առաջ մինչև մեր օրերը։ Մ. Զմշկեան կարդաց Սահակի և Մեսրոպի հակիրճ կենսագրութիւնը։ Ս. Եսայեան ստացած հեռագիրներից, ձոներից և շնոր-